Փողն կը հրատարակուի ամեն օր։

Բաժանորդութեան գինն է թէ Պօլսոյ և թէ Գաւառաց համար 150 թիւ մէկ Օսմանեան ոսկի կանխիկ.

Օտար երկիրներու համար ճամբու ծախքն առնող ին վրայ է։

Մէկ թերթի գինն է 1 դուրուշ։

ՓՈՂ

ԱՐԵՒԵԼԵԱՆ

Ծանուցմանց տողն առաջին անգամի համար 3 դրշ. երկրորդ անգամի համար 2 դրշ. աւելի անգամներու համար մասնաւոր սակարկութիւն կըլլայ։

Նամակք և դրամներ պէտք է ղրկել ի վ. կզիր խան գետնայարկ թիւ 8. առ Գ. Մ. Շիշմանեան. անվճար նամակներ չեն ընդունուիր։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ՀԱՏՈՐ Բ. | 1872 ՓԵՏՐՎԱՐ 18 ՈՒՐԲԱԹ | ՐՍՏ Ն. Տ. ՄԱՐՏ 1 | ԹԻՒ 14

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ 18/1 ՓԵՏՐՎԱՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Հնդկաստանի փոխարքային Լորտ Մայոյի սպանութեան Անգղիոյ մէջ այնպիսի ընդհանուր յուզում մը պատճառեց՝ որ կրցաւ պահ մը մոռնալ Ա. Դոմոյի խնդիրն։ Սոյն սպանութեան վրայ հետեւեալ տեղեկութիւնները ստացուած են Լոնտրայի Հասարակայ Խորհրդարանին։

«Պ. Կլատսթոն իմացուց Խորհրդարանին որ նոյն օրէն կէս օրէն յետոյ Հնդկաստանի վարչական պաշտօնատունէն և Պ. Էլլիսի կողմէն հեռագիր մը հասած էր որ կը ծանուցանէր թէ Լորտ Մայօ սպաննուած է ամսոյն 8ին Բօրթ-Պլէրի մէջ, երեկոյեան ժամ 7ին։

«Ընդհանուր կառավարիչը բանտին այցելութեան գացած էր, և, պոյն աչքէ անցնելէ յետոյ, գինքը Մը Օլ Ռոբ նաւը տանող նաւակը կը գտնայր, երբ յանկարծ չուառական մը, Փերեալի անուանեալ, մեծ թնդանօթ քաշելով, անոր հասկն վազեց և թիկանց վրայ երկու մեծ վէրքեր բացաւ։ Ընդհ. կառավարիչն անմիջապէս հոգին փչեց։

«Մարդասպանը, որ արդէն 1867ին Բէչաուրի գործակատարն սպաննած էր լալուն համար յանցաւոր էր, նոյն ատեն մշանջենաւոր աքսորանաց դատապարտուած էր։

«Առաջին պաշտօնեայն յաւելցուց որ չէր կրնար նմանօրինակ լուր մը հաղորդել առանց խորին ցաւոյ մը յայտնելու այն կարեւոր հարցի՝ զոր Թագուհին կ'ընէր իւր ծառայներէն միոյն մահուամբն՝ որ ամենէն աւելի կը վայելէր իւր վստահութիւնը։ Պ. Տիզրայէլի ըսաւ իւր կարդին թէ Լորտ Մայօ խիստ ծանօթ էր Հասարակայ Խորհրդարանին մէջ և թէ ամենէն սիրեալ էր։

«Սիւքըս դնդապետը դիտել կուտայ թէ այն սպանութիւնը քաղաքական նշանակութիւն մը չունի։

«Նիսաը կը շարունակէ։»

Տեյլի Նէուս հետեւեալ հեռագիրը կը հրատարակէ՝ զոր իւր Կալկաթայի թղթակիցն ուղղած է իրեն փետր. 12ին.

«Լորտ Մայօ, փոխարքայն, ամսոյս 6ին Մուլմէյնէն մեկնելով, 8ին առաւօտեան Անտաման կղզին հասաւ։ Իւր ճամբորդութիւնը նոյն օրուան երեկոյին սովորի ողջերգութեամբ մը վերջացաւ։

«Այս պատմութեան վտանգաւոր մասերուն մէջ այլ և այլ հաստատութիւնները աչքէ անցնելէ յետոյ, փոխարքայն Հարրիեթ լեռնէն վեր կելնէ՝ նոյն տեղւոյն գեղեցիկ տեսարանը վայելելու համար, իւր հետեւակները ընդհանուր վերատեսչը, իւր սպայակոյտին մի քանի պաշտօնակալները և ոստիկանութեան գինեալ պահապանները։

«Հարրիեթի լերան և Հօր—Թօուրի միջտեղ և բլրոյն ստորոտը, 200ի չափ բնիկներ, որոց մէջ բանի աշխատութեան դատապարտեալներ, մուրացիկներ, հիւանդներ, արհամարհուած հրաման ընդունած գինուորներ կային, նա կը դառնային միջնալու միջոցին, երբ, ծովեզրը հասնելով, նաւուն կապուած տեղէն միայն մի քանի ետրտ հեռի, խումբը սկսաւ ցանցառիլ. փոխարքային աճապարեց, երբ բանի աշխատութեան դատապարտեալ մը յանկարծ իւր վրայ խոյացաւ և սայրասուր գինուք կռնակին վրայ երկու հարուածներ իջոյց։ Փոխարքային դեռևին ինկաւ և մի քանի վայրկեան յետոյ մեռաւ առանց խօսք մ'արտասանել կարենալու։ Մարդասպանը, որ կ'ըսէ թէ անունը Փիպերս է, յայտներ է թէ այս ոճիրը Աստուծոյ ներշնչութեամբը գործեր է։»

Թայմս կը խորհի թէ Հնդկաստանի մէջ տեղի ունեցած այն անցքերուն պէտք է որ Անգղիոյ խորին ուշադրութիւնն հրաւիրեն այդ երկրին վրայ։

——

Տեյլի լրագիրն, Անգղիացւոց մարդասիրական զղացմանց վրայ խօսելով, իբրև ապացոյց հետեւեալն յառաջ կը բերէ։

«Ընդ ատեան, ինչ ինչ հեռագիրներէ, իմացուեցաւ որ անգղիական Հնդկաստանի մէկ նահանգին մէջ, բնիկներու ապստամբութիւն մը տեղի ունեցել, բայց չատով զսպուեր է։ Կալկաթայէն փետր. 3 թուականաւ եկած հեռագիրը կ'իմացնէ թէ, ապստամբութեան զբաղմունքն յետոյ, անգղիական զօրաբաժինն 50 մարդ ընտրեց մահուան մատնելու համար։ Սպանութեանց սարսափին վրայ, այս թշուառներէն մին, որ Անգղիացւոյն վրայ յարձակիլ ուզեց՝ սրախողխող սպաննուեցաւ։

«Մինչ 49 անձինքն սպաննուելոյն այնպիսի եղանակաւ մը՝ որով օրինակն արդէն տուած էին Անգղիացիք Հնդկաստանի մեծ ապստամբութեան առնելնուն, զանոնք Հնդանօթներուն բերանը կապելէն և վառօդով նետելէն։ Հեռագիրը կը յայտնէ թէ ուրիշ զօրաբաժին մ'ալ տակաւին 16 անձինք սպաննելու տուաւ, բայց ինչ եղանակաւ լալը չըսեր։

Աղատամբելոց դէմը, գրեթէ 30 մարդ, իբրև երէ վայրի օրացուերէ. 66 արք, որոց 29ն վիրաւոր, և 2ին, ամենքն անօթութենէ ոգեվար, վրայէն այնհետեւ եղեր են 4 մարդ։

«Աւրդար ըլլալու համար, պարտք ըսել թէ հեռագիրն այսպէս կը յաւելու. «Կառավարութիւնը անմիջական քննութիւն մ'ընելու հրաման տուաւ։ Հասարակաց դպացումը, պահ մը վրանալ, մասամբ մը այն սպանութեանց դէմ կ'ելնէ։»

«Ոչ ինչ կ'ուզեմք ըսել աւելի, Անգղիացւոց կրօնական և մարդասիրական դպացմանց թողլով այս այնքան քիչ քրիստոնէական զօրաց արժանաւոր անունն մը տալու պատիւը։»

Էհ, քաղաքակրթութի՛ւն, դու ո՞ր ես, և ոտակատին ամենէն աւելի քաղաքակրթուիլ հռչակուած ազգերն ո՛րքան հեռի են քեզմէ. . . :

——

Թէօճ լրագիրը Աղզացւոյ մը թղթակցութեան սա հետեւեալ մասը կը հրատարակէ։ Կորսնցնել հայրենեաց մօրմոքանքն այնպէս բնական պերճախօսութեամբ մը բացատրուած են հոն որ չեմք կրնար մեր ընթերցողաց չը-թարգմանել զայն։

«Գիտէք, այս պատերազմին առնը քան մ'էի ես ալ. Գաղղիոյ համար պատերազմեցայ, հանդիսապէս ընկերքայ Իւրիւք զօրապետին և մեր մի դերասանին վարեալ դժբախտ զօրակառնայ, և ասի թշնամի զօրապետին առջեւ առակ։

«Ընդունեցայ պատուոյ Լեգէոնի ասպետութեան խաչը, որ ինձ տրուեցաւ սեպտ. 4ին, բայց նաև պարտքս կատարած ըլլալու գիտակցութիւնն ունիմ. ասի դիւրին եղաւ ինձ, քանզի իմ կեանքս նուիրած էի անո՛ր փրկութեանը՝ զոր Գաղղիոյ Պ—ւբլըը կը կոչենք։

«Այս բարոյական պարադայից մէջ, ալ չըներ իսկ մարդ առումներն, և այս ալ կայ որ մեր արդի տիրապետող աբեհամած երկու հարիւր յիսուն հազար ամլոց ամենքն ալ միանպատայն և ի միասին չպայթեցան։ Բայց ի՛նչ քստմնելի անէրև։ Երբ հիմայ միտքս կը բերեմ, սարսուռ մը կ'զգամ անդամոց վրայ։

«Գառն պատերազմ մը, խորին թախիծ մը, կատարեալ անյուսութիւն մը կը մնայ յիս, վասն զի կը վախնամ թէ երկար առեն աշխատիլ պիտի մնանք, և թէ մեր Աւլտսը ժՊ. գարուն Բոլոնիան պիտի ըլլայ։

«Ես, որ այնքան կը սիրեմ մարդկութիւնը, ահա՛ սոսկացած եմ յիս անիսխուռելու, իմ ճշմարիտ հայրենեացս վրայ խորհելով, որոյ սէրը իրականացած տարփանքի մ'աստիճանն հասած է։

«Կը սիրեմ զԳաղղիա յիմարաբար, ինչպէս երիտասարդ հասակին մէջ կընայ սիրել մէկը պաշտելի սիրուհի մը։

«Կը սիրեմ զայն, հակառակ իւր թերութեանցն և հանդերձ իւր թերութեամբը. կը սիրեմ, ապերախտը, որ թողուց զմեզ, և յաւուր յորում վերադառնայ նա, եթէ հարկ ըլլայ զերեզմանէս երթալ վերատին մեռնելու համար, պիտի երթամ գոչելով «կեցցէ՛ Գաղղիա»։

«—Կը վերջացնեմ, քանզի երբ այս մտածութիւններն կ'արթննան յիս, ալ խելքս իմս չէ։ Բարեւ՛ ձեզ՝։

——

Գաղղիոյ գաւառներէն Լօռի և Բօթ—Տիւ—Նօռի մէջ կատարուած երեսփոխանական ընտրութիւններն խիստ գոհացուցիչ արդիւնք մ'ունեցան։

Սոյն գաւառներէն առաջնոյն մէջ, որ մինչև յարդ օրինաւորական կառավարութեան անձնուէր էր, Պ. Թիէրի կառավիչներէն Պ. Լրկալ—Լասալ քաշուելոյ 39 հազար ձայնով ընդդէմ Պ. Քէրիկանի՝ որ 32 հազար քուէ միայն կրցաւ առնել։

Երկրորդին մէջ, որ զուտ պահպանողական գաւառ մ'է, և ուր Պոնապարթականութիւնը հզօր կառավիչներ ունի, արդիւնքն աւելի ևս գոհացուցիչ եղած է։

Հինաւուրց՝ բայց ղօծամիտ հանրապետական մը, Պ. Լըբուէ մրցեցաւ Պ. Ֆուքէի դէմ, որ Պոնապարթական մ'է և 15 հազար քուէ աւագած էր, և օրինաւորականի մը դէմ, այն է Պ. ալ Պօավիլի՝ որ քսան հազար ձայն վաստակած էր։ Պ. Լըբուէ 32 հազարէն աւելի քուէ աւագաւ։

Ասի նշանաւոր յաղթութիւն մ'է և որ, գամ մի ևս, կ'ապացուցանէ այն մեծ յառաջդիմութիւնքն՝ զոր, դիւղական դասերուն մէջ, կը գործեն հանրապետական գաղափարներն և այն փափաքը՝ զոր գաղղիական ժողովուրդն, ի բաց առեալ դատաւորներու փոքր մաս մը, ունի հանրապետական ձեւոյս, ուր միայն կը յուսայ գտնել իւր փրկութիւնն ու վերականգնումը։

Այո՛, ինչ որ ալ ըսեն միապետականն կառավարութիւնք, Պարսն Օրինաւորականք, Օրլէանեանք և Պոնապարթականք, Գաղղիա հանրապետական է, ո՛չ Հենրիկոս Ե-ի ճերմակ դրօշը և ո՛չ կայսրութեան արծիւը կ'ուզէ. իւր դրօշը հանրապետութեան դրօշն է, այն դրօշը՝ որ, իւր եռակի գոյներուն, Աղատութեան, Հաւասարութեան, Եղբայրութեան Սրբազան երդումին խորհրդանշանն է։

Խ. — Բ.
Պ.

ՆԵՐՔԻՆ

Պուքրեշի Օրագրին մէջ կը կարդանք թէ կառավարութիւնը ձիւր Ձէվօի և Ռուսչուքի մէջտեղ Պանուբի վրայ կամուրջի մը չինութեան վերաբերեալ օրինաց ծրագիր մը ներկայացուցեր է առ Խորհրդարանն։

Վերոգրեալ ծրագրոյն նպատակն Պանուբի երկու ծովափանց մէջտեղ յարաբերութիւնները դիւրացնել և առևտուրն Եւրոպիոյ ճանբան կարճել

ըլլալով, փափաքելի է որ ընդ հուպ նոյն կամուրջին չինութեան ձեռնարկուի։

—Լօֆչայի եպիսկոպոս Գեր. Հիլարիոն՝ որ անցեալ՝ օր Պուլղարաց Պատրիարքը ընտրուեր էր, նոյն պաշտօնը չընդունելուն համար՝ իւր տեղ Գեր. Անթիմոս Վիտինի եպիսկոպոսը ընտրուեցաւ։

—Ցար տիւ Պօսֆոր օրագիրն, իւր 1872 փետր. 26 ամսաթուով հրատարակած թերթին մէջ, «Պուլղարաց խնդիր» վերնագրով դրած յօդուածին համար, եռամսեայ դադարման դատապարտեցաւ։

—Բրուսիոյ Ֆրէտերիկ Շարլ իշխանը այժմ յԵգիպտոս գտնուելով, կը կարծուի թէ յառաջիկայ ապրիլ ամսոյն մէջ Ի՛կ. Պօլիս պիտի գայ։

—Բերայի թաղապետութեան նորընտիր նախագահն, իւր չորեքշաբթի առաւօտ մէկ պաշտօնագրովը, կառավարաց և ձի հեծնող անձանց՝ իրենց ձիերը 6րդ չրջանակի փողոցներուն մէջ վազցնել արգիլեր և հրամայեր է որ այն ամեն կենդանիներ՝ որոնք անցորդաց երթևեկութիւնը խափանող բեռներ կը կրեն, բնաւ ասկէ վերջ, Գալաթիոյ և Բերայի, բազմամբոխ փողոցներէն չ'անցնին։ Վեցերորդ Երջանակի նախագահին վերոյիշեալ հրամանը ստուգիւ ոչ նուազ հասարակաց չահուց կը նպաստէ՝ եթէ ճշդիւ Ի դործ դրուի։

—Երեքշաբթի օրը, Պէյնկրաչի մէջ, որմնադիր մը իւր գործովը զբաղած միջոցին, յանկարծ պատ մը իւր վրայ փլելով, իսկոյն խ՛ղճ գործաւորը մեռեր է։

—Ոստիկանաց ընդհանուր պարտաւորութիւնը մանրամասնաբար յայտնող կանոնագիր մը ոստիկանութեան պաշտօնեայ Ա.—Եանաք Մուսթաֆա փաշային հրամանաւ Մայրաքաղաքս և իւր չրջակայքը գտնուող ոստիկանաց բոլոր պահականոցները ղրկուեր է։

—Երեքշաբթի օրը, ոստիկանութեան պաշտօնատունը, մօտերս վերանորոգուած նախկին Ա.ւստրական պաշտօնատունը փոխադրուեցաւ։

—Մեծ կղզւոյն մէջ, Յոյն դեղագործ մը, չորեքշաբթի օրը, ինքզինքը թունաւորելով մեռուցեր է։

Կ'ըսուի թէ այդ անձնասպանութեան պատճառ եղած է նոյն դեղագործին սիրահարական վչտերու անձնատուր ըլլալն։

—Կը լսեմք թէ կիւրակէ օրը, Թըրամուէյի կառքերէն մին Ա.զապ-Գափուի կայարանը կենալէ վերջը, նոյն կառքին մէջ նստող մարդ մը կառքէն դուրս ելած միջոցին, դիմացի կողմէն Թրամուէյի ուրիշ կառք մը վրայ հասնելուն համար, նոյն մարդը երկու կառ-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳԱՄԷԼԻԱԶԱՐԴ ՏԻԿԻՆ

ՀԵՂԻՆԱՓՈՓԻԿ

ԱՂԷՔՍԱՆԴՐ ՏԻՄԱՑԻ ՈՐԴԻՈՑ

(Շարունակութիւն տե՛ս էջ 11)

Սակայն այն խնդումը, անվայել խօսակցութիւնները և արբեցութիւնը, զորս չատախտաւիեան հետանք կը համարվի յայլ կոչնականս, խուէր ինձ ի Մարդ արիասա մոռնալու կարօտութիւն մը, սենդ մը և գիւրազբաղութիւն ջղոց։ Իրաքանչիւր Շամպանիայի գինւոյ գատաթը քամելն յետոյ այտերը կը ծածկուէին ջերմնական կարմիր գոնով. ընթրեաց սկիզբն ունեցած թեթև հոգը գայրանալով ստիպուեր էր գլուխն ամբողջ թիկունքը յենու և ամէն անդամ հաղալուն ձեռնովը կուրծքը կը պնդէր։

ռայ մէկտեղ մնալով ճգնուեր և մէկ քանի ժամէ վեր-ջը մեռեր է։

Որ և է զգայուն սիրտ չը կրնար ցաւ չ'զգալ երբ կը տեսնէ որ անզգուշութեանց պատճառաւ այսպիսի քաղցեալ դէպքեր տեղ տեղ կ'ունենան։

—Կ'իմանամք որ երէկ երեկոյ, Պալըքլէի Հայոց Եկեղեցւոյն մօտ գտնուած պատրիկի խանութներէն երկուքը յանկարծ փլելով նոյն խանութներուն գործաւորներէն մէկ քանին վիրաւորներէն մէկ քանին վիրաւորեր են։

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Վէրսայլ 28 փետր.

Ժողովը, կառավարութեան հետ համաձայն, երկրին ազատութիւնը ճեպելու միջոցները քննելու համար յանձնաժողով մը կարգելու մասին իւր անդամներէն միոյն ներկայացուցած առաջարկութիւնը մերժեց։ Այս նիւթիս վրայ արտասանած մէկ ճառին մէջ, նիւրքին գործոց պաշտօնեայն ըսաւ որ ազգային ճշմարիտ և յաջողութեան յոյս տուող միակ ստորագրութիւնը փոխառութիւն մը կրնայ ըլլալ։ Պ. Վիկտոր Լըքրան յաւելցուց թէ Իրաստա իմացուցեր է գաղղիական կառավարութեան որ տարին 3 % զեղչով չորրորդ կէս-միլիարդն մնացեալ 410 միլիոնին յառաջագոյն վճարումը կ'ընդունի։

Պրուքսէլ 28 փետր.

Եամպօրի կոմսը երէկ Տորտրէչ հասաւ (Ի Հոլանտա)։ ուր ան այժմ իւր բնակութիւնն հաստատեց։

Վիէննա 28 փետր.

Կառավարութեան՝ առ Բոլոնիացիս ընդհատրամադիր գտնուած զինուններն Բէյդրաթի մէջ վիճարանուեցան և հաճութեամբ ընդունուեցան։

Աւստրիոյ Ի Լոնտրա դեսպան Պ. սը Պայսթ պաշտօն առաւ Ալաղամայի խնդրոյն վրայ Գերմանիոյ և Աւստրիոյ մէջտեղ համաձայնութիւն մը գոյացնելու։

Րումէլիի ազատեալ բաժինք	76,40
Աւստրօ-Օսմ. պանդայի բաժինք	141,95
Ասիս	111

Բարիզ 28 փետր.

Ֆրանքօ-Ռուս արուեստական նոր ընկերութիւն մը հիմնուեցաւ։

Եւրոպիոյ Տահկաստանի երկաթուղեայ բաժինք 174,23 ֆր. են։

Պուքրէչ 28 փետր.

Օրէնսդիր ժողովը նիստը ետ ձգուեցաւ։

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

Լօնտրա 29 փետրվար.

Փախ. վճարելի Ի Բարիզ	25,80
Գօնսոլիտ Անգլիա	92 1/2
» Թիւրքիոյ	49 3/4

Բարիզ 28 փետրվար.

Գօնսոլիտ Գաղղիոյ	56—62
» Իտալիոյ	66—75
» Թիւրքիոյ	50—

Վիէննա 28 փետր.

Ասիս	111—26
Երկաթուղի Րումելի	77—00
Փախ. Լոնտրա 3 ամիսէ վճարելի	112—75

——

ԿՈՒՍՏԱՆԴԻՆՈՊՕԼԻՍ 18-1 ՓԵՏՐՎԱՐ

Փոխանակագիր լիրա 100 ղրշ. էն.
Լոնտրա 3 ամիսէն վճարելի 108 1/2
» 3 օրէն » 110
Մարսիլիա 3 ամիսէն » 25—70—00

——

ՕՍՄԱՆԵԱՆ ՔՕՆՍՕԼԻՏ

Փետր. 17 երեկոյին գոց	34— 1
» 18 բացուեցաւ	34— 3
Ժամ 6	34— 6
Կէս օր	00— 0

——

Փախ. 1865 ի	ֆր. 528—
» 1863 ի	» 535—
» 1869 ի	» 302 1/2
Երկաթուղի Րումէլիի	ֆր. 169— 1/4
Թրամուէյ (ասիս)	640—

——

ԸՆԹԱՑՔ ԴՐԱՄՈՑ

Անգղ. լիրա	109 — 2
Քան ֆրաքնոց	86—38
Ռուս էմբերիալ	89—10
Բրըմից	51 — 27
Արծաթ մէճիտիյէ	1—35
Հինգնոց	105—25
Մէթալիք	105 - 54
Պինձ	119—

Անցեալ չաբթու թէ դիտողութեան և թէ պուլսակին մէջ բաւական սխալներ սպրդեր են. այս մասին ներողութիւն կը խնդրեմք. յայտնի է որ ամեն բան իւր սկզբնաւորութեան միջոցին թերութիւններ կրնայ ունենալ... Եաբթուս կ'ուզենք կարևոր կէտերու վրայ խօսիլ, սակայն այս անդամ միջոցնիս չը ներելուն համար կը խոստանամք որ ուրիշ անդամներ նաև վաճառականութեան վերաբերեալ դլխաւոր մասերուն վրայ նօսինք, որոնք մեծ ծառայութիւն կըրնան ընել ընթերցողաց։

Վերջին օրերս աֆիոնի և բամպակի վրայ բարձր դիներով բաւական գործեր եղան, և այնպէս ուրիշ մէկ քանի տեսակ ապրանքներէն չատ յուսալի է որ առևտուրերը հետզհետէ բարուոք վիճակ մ'ստանան, եթէ Սլապամայի խընդրոյն վերջ տրուի, Աւետեան.

ՎՐԹԱԿ

Երեկուան փողոց երկրորդ երեսին չորրորդ սիւնակին 41 րդ. տողին մէջ «յեղափոխականութեան» բառը «յեղափոխութիւն» պիտի ըլլայ։

ԱԶԳԱՅԻՆ

ՊԱՏՇՕՆԱԿԱՆ ԱԶԳ

Առ Երեսփոխանական ընտրող Մայր եկեղեցւոյ, Կէտիկ-Փաշայի և Գում-Գափուի դրսի Մեացեալ Թաղից.

Միացեալ Թաղիցս հրաժարեալ երեք երեսփոխանաց տեղ նորերուն ընտրութեան առաջին քուէարկութիւնը երէկ (փետր. 13) կատարուելով, քուէից բացարձակ առաւելութեամբ երեսփոխան ընտրուեցան.

Նահապետ էֆ. Ռուսինեան.

Ա.ռաքել պէյ Յ. Տատեան.

Իսկ մնացած մէկ երեսփոխանին ընտրութեան քուէարկութիւնը պիտի կատարուի Մայր Եկեղեցւոյ մէջ յառաջիկայ կիւրակէ (փետր. 20), առաւօտեան ժամը 2 էն մինչև 6, առաւելապէս քուէ ստացողներէն երկու անձանց վրայ, որք են,

Մանուկ էֆ. Ս.րապեան.

Կարապետ » Մալղարեան.

Բայց այս անդամ այս երկու անձերն դուրս քուէ չտրուիր։

14 փետրվար 1872.

Նախապահ Ընտր. Ժողովոյ
Ա—էյ—ՐՀՆ. Մ—ՍՐ ԵՂԵՂԵ—Յ.

ըլլայի եաևէն վազեցի, մինչ Բրիւսաանա և Նանին զարմանալով կը ձայնէին պիս։

Ժ.

Լյն սենեակն ուր քաչուկը էր՝ կը լսուաւէր սեղանի մը վրայ դրուած կանթեղ մը։ Մրդարիտա պանափինի վրայ ինկած, պարկօսը քակած, մկ ձեռնը սրտին վրայ դրեր, իսկ միւսը կախ թողուցեր էր։ Սենդին վրայ դրուած ջրով կէս լեցուն ամանի մէջէն կը տեսնուէին արեան նուրբ թելեր։

Մարդ արիասա պլպլուած և բերանը կիսասայ՝ կը ջանար շունչ առնել։ Մերթ ընդ մերթ կուրծքը կ'ուռնոյր երկարաձիգ հառաչով որով արտաբերութեամբը սակաւ մի բաժդեղմէ քանի մը վայրկեան հանդստանար կը վայրկը։

Աչանց իմանալուն մօտեցայ իրեն, նստայ քովը բռնեցի պանափինին վրայ դրած ձեռնը։

— Դո՞ք էք եղեր, ըսաւ ժպտելով։

Կ'երևի թէ պլպղուած էի, վասն զի յաչս իւր և ըսաւ.

— Մեռե՞ք ալ հիւանդ էք։

— Ո՛չ. բայց դուք ի՞նչպէս էք հիմա։

— Գրեթէ ապկ եմ, և զայս ըսելով սրբեց արտասուքը՝ զոր հոգը բերեր էր յաչս իւր. ես ալ սաղ սաղորեր եմ այս բանիս։

— Ձեր առաջնութեան կը վնասէք, տիկին, ըսի այն առեն պլպլած ձայնիւ. եթէ ձեր բարեկամը կամ ազգականն ըլլայ, չէի թողը որ այդպէս կեանքերնիդ համառօտէք։

— Աղդարև չարժէր որ աղջիկը ասոր համար, կրկնեց դառն եղանակաւ, նայեցէ՛ք, ուրիշներուն վսեմը կ'ըլլա՞յ. որովհետև դիաեն որ այս սխալս դարման չկայ։

Զայս ըսելով երես և մռնչ կրակարանին վրայ դնելով երեսին նայեցաւ հայելիին մէջ։

(Շարունակելի.)

— . . . Խմբագր. Փողոց.

Յառաջիկայ փետրուար 19 չաբաթ դիշեր Նարին Վ.սեմութեան Մեծ Եպարքոսի հրամանաւ բարձրագոյն պաշտօնակալաց և իւր ներկայութեան Տաճկերէն լեզուաւ հետևեալները պիտի ներկայացուին։ Ուստի Օրտուլի Հայկազեան վարժարանի Ի՛նպատտուրեալ ներկայացումը, ուրիշ դիչերուան մը միացած ըլլալը կը ծանուցուի Ս.ղոյ Ս.ղբայնոց։

Ա.յարհամդա։ — կատակերգութիւն յերիս արարս։ Զանդակ. —Կատակերգութիւն Ի մի արար։ Թէլամադ Ի տաճարին Ա.ստղական —Ի մի արար։

Նրգ և պարք։

Մեծ. Խմբագր. Հաճեցէք սոյն պզտարարութիւնս Ձեր այսօրուան և մինչ ներկայացման օրը չարունակ Ձեր աղդօգուտ թերթին մէջ հրատարակել։

1872 փետ. 17 Մնամ հլն.
Թ. Օսմանեան 8. Վ—ԻՐ—ՎԱՆ

1872 մարտ · 16 ՝ Ուրբաթ ·

Ա.ՀԱՅՐԵՆԻՔ

Մեր ժողովուրդը միշտ ունեցել է մեծ հարգանք դեպի գրականությունը, դեպի մտքի ստեղծագործությունները, որոնք ազգերի կյանքում մեծ դեր են խաղացել։ Ազգերի պատմության մեջ գրականությունը միշտ եղել է ազգային ոգու արտահայտիչը, ազգային կյանքի հայելին։ Ազգերի կյանքում

ԾԱՆՈՒՑՄՈՒՆՔ

ՏՕՔԹՕՐ Պ. ԹԻՒՐԱՊԵԱՆ

Պատրաստ է Բերա Սաղըզ աղաճի ճատաէսի Հալէպցւոց Եկեղեցւոյ դիմացը թիւ ։

Ամէն ուրբաթ օրեր նաև երեքշաբթի օրեր Ճրիաբար նայիլ իրենց գիմագ հիւանդները։ Ձինքը փնտռողը կրնայ գըտնել ՚ի Ղալաթիա՝ Մատէլլայի, ՚ի Կ. Պոլիս Սէպաթի, ՚ի Սուլթան Պէյազիտ՝ Մատրովիչի և ՚ի Մուսալա Գրիգոր աղայի դեղարանները։

——

Աւրուած, կոտրած, և որ և իցէ կերպով անդործածելի վիճակի մէջ եղած կարի գործիքները, ամենայն կերպով լաւ վիճակի մէջ դնելու, նմանապէս կար դաս տալու յարմար պատրաստ անձ մ'ուզողը, կրնայ մեր գրասենեակէն տեղեկանալ։

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԴՈՐԾԱՍԷՐ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԳՐՈՑ ՅԱՆԿԸ

Լամընէ. Բանք Հաւատացելոյ ուրուք Գին քառորդ մէճիա.

Դասագիրք Հայ. պատ. Գին 5 ղրշ.

Քրիստոս ՚ի Վատիկան. Գին քառորդ մէճիա.

Գաղտնի Ատեան, Անկախ Դատաւորաց Գին $\frac{1}{4}$ մէճիա.

» » Աղարատաց Բաժանողաց համար գին 4 ղրշ.

Կը ծախուին ամէն Հայ դրավաճառաց, և Բերայի լրագիր ծախող վաճառներուն քով, և կամուրջին գըլուխը Պոյաճ և Իզմիր Պ. Հ. Շահվէքիլեանի խանութը։

ԳԱՂՏՆԻՔ ԱՄՈՒՍՆԱՒԹԵԱՆ

ԿԱՄ

ԱՌԱՋՆՈՐԴ ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԿԵՆԱՑ

Վասն ամուսնացելոց և ամուսնացելոց.

Գ. ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆ

Բովանդակութիւն. — Կոչումն և նպատակ ամուսնութեան. — Ամուսնական կեանց համար պահանջուած մարմնական յատկութիւնք. — Պայմանք և կանոնք ամուսնական յարմարութեան. — Յղութիւն. — Կաթնատուութիւն. — Կաթընտուկն. — Դարմանումն երախայից. — Վարժութիւն երախայից. — Մանկունք հիւանդութիւններէ ապահովցնել. — Մանկանց նախնական կրթութիւնը. — Մանկանց ախտայները. — Բարեկազմ մանկունք. — Արտադրումն արու կամ էգ երախայից. — Պահպանութիւն ըստամքսի. — Դարման անկարողութեան. — Դարման անկարող պարբերականի. — Ձէյմնթի սթօմաքինը. — Գաղտնիք և առաջնորդ. — Խօսք առ ամուրիս. — Մշտատև տարեցոյց ամուսնական։

Գին $4\frac{1}{2}$ ղրուշ

Կը ծախուի ամէն հայ դրավաճառաց քով, նաև կամուրջի գլուխը պարապան կեդրոնատեղին է Ֆրէնկեան գրատունը Մէրճան փողոց թիւ 67 Բասմըճիճի խանի կից։

——

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ

Մեծ. Պերպէրեան Աւետիս պատուելի աշխատասիրած Պատմութիւն Հայոց ընծիր գործը՝ զոր ամէն առաջ թէ մեծ. հելինակին և թէ ազգապրական ծախուց համար սահպուած էինք թէև 3 արծաթ մէճիտի ծախելու, բայց նկատելով որ մեծարգոյ հասարակութեան կրտմանէ գնոյն բարձրութեանը պատճառաւ գժգոհութիւն կը տեսնուի. այս անգամ թէ ընթերցասէր ազգայնոց գիւրութեանը՝ և թէ մեր ազգին մեծ գործին համար ըրած ծանր ծախսերը եթէ ոչ գոցելու՝ գոնէ թեթևցնելու համար՝ $1\frac{1}{2}$ արծաթ մէճիտի ծախել որոշած ենք ՚ի շնորհս մեզ, կանխաւ վըստահ ըլլալով որ սիրելի Ազգիս ընդունելութեանը կ'արժանանայ մեր այս դուշնաքեայ ծառայութիւնը։

Վերոյիշեալ պատմութիւնը կը գըտնուի Մէրճան չարշին թիւ 88 Պալոն Քերովբէին գրատունը։

Սոֆոն Պէշէրճեան.

——

Ա Ռ Ա Կ Ը

ՔՈԻԼՈՎԻ

ԹԱՐԳՄԱՆԵՑԻՑ

ԴԱՐԻԻԼ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՅՎԱԶԵԱՆ

Այն գիրքը որ 436 երեսներէ բազկացեալ ստուար պորձ մ'է, կը պարունակէ Ռուսլովի առակաց Հայերէն աշխարհաբար թարգմանութիւնը, որոց մէկ մասն արդէն նախ Բազմավիպին և ապա Մասեաց Աղաւնոյն և Ծիածանին մէջ, նաև առանձին տետրակով հրատարակուած և ընթերցողաց բաւական ախորժելի երևցած ըլլալուն, թարգմանիչն արժան դատած է միւս մասունքն ևս թարգմանել՝ որպէս ընթերցանութեան օր աստիճան արժանի ըլլալուն համոզմամբ մեր կողմանէ վկայութիւն մը աւելորդ կը համարիմք։

Կը ծախուի Աւրամեան դրատունը և դրավաճառաց քով։

Գին թղթակազմին 6 ֆր.

Կաշիակազմ 7,50 ֆր.

——

ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ

Գիր. Երեմիա վարդապետի Վանեցւոյ
Տ. Սարգսեանց Եպիսկոպոսի Ծոփաց
Աշխարհին.

Այս բազմածանօթ հայրենասէր Եպիսկոպոսին վերոյլսեալ աշխատասիրութիւնն ընդհանուր տեղեկութիւն կուտայ Հայաստան աշխարհի բնական, քաղաքական, պատմական, եկեղեցական, կրթական, ընկերական, ընտանեկան, արուեստական և այլն վիճակաց վրայ. լեզուն է դիւրահասկանալի գըրաբար, կը բաղկանայ 552 երեսէ։

Այս աշխատասիրութիւնն ոչ միայն ազգային պատմութեան անկշռելի օգուտները կը մատուցանէ այլ նաև ամէն ատիճանի և հասակի Հայոց ուզղակի ընտիր յորդորներովը ընթերցման մէջ արժանաւորութիւն ունենալը ճանչցուած և վկայուած է։

Կը գտնուի ամէն Հայ դրավաճառաց քով գին մէկ արծաթ մէճիա։

ՏԷՐ ԼՐԱԳՐՈՑ-ԿԱՐ. ՄԻՆ. ԵՐՋՆԿԱՆԵԱՆ

ՏՆՕՐԻՆ Գ. Մ. ՇԻՇՄԱՆԵԱՆ

Ա Ռ Ե Ւ Տ Ր Ա Կ Ա Ն

ՀՐԱՊԱՐԱԿ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼՍՈՑ 1872 ՓԵՏՐՎԱՐ 18/1

ԲԵՐՔ ԱՍԻՈՑ — Ընթացք շաբաթական ներքին և արտաքին բերքերու. — ԲԵՐՔ ԵՒՐՈՊԻՈՑ

ԲԱՄՊԱԿ	(Օգկա)	(Ղուրչ)	(Փր.)	(Օմ. Ո.)	(Ծախուած)	(Պատրաստ)
Ատանա	»	10	15	100	5000 Հակ	15000 Հակ
Վրաստան	»	8	30	»	1500 »	10500 »
Պարսկաստան	»	8	—	»	8500 »	2500 »
Կէօրէս	»	11	10	»	11000 »	1000 »
Իզմիր	»	10	—	»	2400 »	12400 »
ԲՈՒԲԴ						
Անատօլու լուացուած	»	17	20	»	500 »	15500 »
» չլուացուած	»	10	10	»	——	—— »
Րումելի լուացուած	»	18	20	»	100 »	2100 »
» չլուացուած	»	10	30	»	—— »	—— »
ՄԱԶԸ						
Պարսկաստան	»	11- 10	20	»	300 Պարկ	2710 Պարկ
Անատոլ	»	10	10	»	—— »	—— »
Ճերմակ	»	7- 6	30	»	—— »	—— »
ՃԿՃՐԻ						
Կեսարիոյ	»	21	20	»	—— »	3100 »
Էնկիւրիւ	»	20	20	»	—— »	—— »
Թօզատ	»	18	20	»	550 »	2460 »
Աքէլէր	»	16	20	»	100 »	—— »
Փիթըբ	»	26	—	»	—— »	—— »
Աֆիօն	»	270-255	—	»	—— կոլոլ	—— կոլոլ
Վարդի իւղ	(Մըսգալ)	16- 17	—	105	—— Մըսգալ	150000 Մըսգալ
	(Օգկա)					
ՊՂԻՆՁ						
Թոդաթ	»	9	10	100	——	
Մանչէսթէր տախտակ	»	12	50	»	10000 »	150000 Օգկա. —— »
ԱՅԾԻ ՄՈՐԹ	(Հատ)					
Ամասիա	$6\frac{3}{4}$	100	—	»	1000 Հատ	15000 Հատ
Եօզղաթ	8	100	—	»	500 »	1900 »
Սեբաստիա	$8\frac{1}{2}$	100	—	»	—— »	8000 »
Կեսարիոյ	9	100	—	»	—— »	3000 »
ԹԻՖԹԻՔ	(Օգկա)					
Էնկիւրիւ	»	50	—	105	200 Հակ	20000 Հակ
Գաստանպօլ	»	48	—	»	—— »	—— »
Պէյբազար	»	51	—	»	—— »	—— »
Վան	»	28	—	»	—— »	1000 »
ԿՏԱՒԱՏ	(Քիլօ)					
Անատօլ	»	56	30	118	—— Պարկ	15000 Պարկ
Րումելի	»	55	10	»	—— »	—— »
Սուսամ	(Օգկա)	4	20	»	—— »	7000 »
Մեղրամոմ ազատրմա	»	25-26	—	110	—— »	—— »
Սալէպ Անատօլ	»	25	—	»	—— »	—— »
ՋԵԹ						
Մուտանիա	»	7	50	106	—— Տիկ	21300 Տիկ
Այվալը	»	7	10	»	—— »	10250 »
Սագըզ	»	10	—	»	—— »	—— »
Միտիլի	»	6	50	»	—— »	3100 »

ՄԵՏԱՔՍ.	(Օգկա)	(Ֆրանգ)	(Մմ.)	(Օմ. Ո.)	(Ծախուած)	(Պատրաստ)
Պարսկաստան	»	55- 50	—	——	3300 Հակ	480 Հակ
Պուրսա	»	—— —	—	——	2000 »	660 »
ԽՕԶԱ		(Ղուրչ)	(Փր.)			
Պրուսա	»	——	—	106	1500 »	22000 Քիլ.
ՅՈՐԵՆ	(Քիլ.)					
Պալթիկ կարճ	»	34- 32	—	118	15000 Քիլ.	15000 »
Ռուսպէօ	»	31- 30	20	»	18000 »	9000 »
Պէյբազար կակուղ	»	29	—	»	12000 »	7000 »
Վարնա	»	28	20	»	55000 »	100000 »
Եգիպտացորէն Թունա	»	18	—	»	1800 »	130000 »
Գարի Թունա	»	15	20	»	17000 »	160000 »
ԱԼԻՒՐ	(Օգկա)					
Եէրլի, Ա. Բ.	120	262-250	—	110	10000 Պարկ	30000 Պարկ
Գալաս, Ա. Բ.		290-270	—	106	8000 »	68000 »
Օակաս, Ա. Բ.	62	160-140	—	100	—— »	100000 »
Խահվէ Բիօ, Ա. Բ.	100	1180	—	104	—— »	90000 »
» Մէքքէ	1	15	—	»	—— »	60000 »
Շաքար փոչի	(Կէնտինար)	245-246	—	105	2000 Տակառ	2000 Տակառ
» Գաղկիա ղալա	»	288-285	—	»	1250 »	30000 »
Պղպեղ	1 (Օգկա)	11	10	»	500 Պարկ	5000 Պարկ
Լէզակ (չիվիթ) Պէնկ.	1 »	120-140	—	»	1000 Միատուկ	9000 Միատուկ
Գըրմըզ	1 »	55- 60	—	104	1300 Պարկ	15000 Պարկ
Սբարմաչէթ	9 (Քիլօկրամ)	87	—	106	—— Միատուկ	6500 Միատուկ
կազ 2 միատուկ	1 (Օգկա)	78- 80	—	»	600 »	5000 »
Թէյ գօնկօ	1 »	25- 27	—	104	350 »	100800 »
» բէքօճաղիկ	1 »	45- 70	—	»	4000 »	80000 »
Թարչին	1 »	25- 26	—	110	700 Օգկա	7000 »
Դարանֆիլ	1 »	6- 7	—	»	1200 »	50000 Պարկ
Անաք	(Կէնտինար)	950-999	—	100	—— Կնդր.	405000 Կնդր.
Հանգային ածուխ	»	30- 32	—	»	80000 Թօնէլ.	208000 Թօնէլ.
Ձինկ տախտակ	100 (Օգկա)	90 ֆր.	(Մմ.)	»	—— Օգկա	—— Օգկա
երկաթ ձողաձև	» »	64 »	—	»	—— »	900 »
» տախտակ	» »	60 »	—	»	500 »	2050 »
» բևեռցու	» »	60 »	—	»	450 »	2200 »
Քարֆ. Փրիզ. Ն. 15–18	50 (Քիլ)	115 »	—	»	1000 Տակառ	18000 Տակառ
ՐՕՄ	(Կալօն)	(Ղուրչ)	(Փր.)			
Անդղիա	10	160	—	»	200 »	4000 »
Թրիէսթէ	14	100	—	»	14000 »	55000 »
Ամերիկա	$9\frac{1}{2}$	100	—	»	—— »	—— »
ԲՐԻՆՁ	(Օգկա)		(Մմ.)			
Խաղիոյ	100	46 ֆր.	20	»	—— Պարկ	10000 Պարկ
Եգիպտոս	1 (Օգկա)	3	10 Փ.	118	5000 Ձանր.	95000 Ձանր.
Կարագ եղ Բուս	1 »	13	10 »	105	8000 Տակառ	13000 Տակառ
Բուսիայի «չէվրիչ»	1 »	8	10 »	»	15000 Տիկ	90000 Տիկ
Խավիար	1 »	36	—	»	500 Տակառ	8500 Տակառ

Գ. Ն. Ա.